ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2012թ. N---Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՑ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղից հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի դեկտեմբերի __ -ի
N -Ն որոշման

Կ Ա Ր Գ

Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղից հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման

1. Սույն կարգով կարգավորվում են Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղից հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածով սահմանված հասկացությունների իմաստը:

3. Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը (միասին այսուհետ՝ ավտոտրանսպորտային միջոց) հատուկ տարածք տեղափոխելուց անմիջապես հետո հատուկ տարածքի համար պատասխանատու անձը կատարում է համապատասխան գրառում հատուկ մատյանում, որը հաստատվում է ավտոկայանատեղի կազմակերպչի կամ վերջինիս լիազորված անձի կողմից:

4. Հատուկ տարածք ավտոտրանսպորտային միջոցի մուտք գործելու և հատուկ տարածքից ավտոտրանսպորտային միջոցը բաց թողնելու ժամանակ մատյանում նշվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) հատուկ տարածք տեղափոխված (հատուկ տարածքից բաց թողնված) ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը,

2) հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցը տեղավորելու (հատուկ տարածքից ավտոտրանսպորտային միջոցը բաց թողնելու) ժամանակը (ամիս, ամսաթիվ, ժամ, րոպե),

3) ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածքում պահպանելու ժամկետը (օր, ժամ),

4) ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու արձանագրության համարը և կազմելու ժամանակը,

6) հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի պահպանման համար հաշվարկված գանձման ենթակա տուրքի չափը,

7) ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու ծախսերի փոխհատուցման մասին տվյալներ, փոխադրողի անունը, ազգանունը, ստորագրությունը,

8) հատուկ տարածքի համար պատասխանատու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը,

9) հատուկ տարածքից բաց թողնվող ավտոտրանսպորտային միջոցի անվնաս լինելու վերաբերյալ դրա սեփականատիրոջ, նրա լիազորած անձի կամ այն անձի, ում կցված է այն, համաձայնությունը կամ անհամաձայնությունը, նրա անուն, ազգանուն, ստորագրությունը:

5. Հատուկ տարածքում երեք տարի ժամկետով պահպանվում են հետևյալ փաստաթղթերը.

1) ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք մուտք գործելու և հատուկ տարածքից բաց թողնելու հաշվառման մատյանը,

2) ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու վերաբերյալ արձանագրությունը,

3) հատուկ տարածք տեղափոխման համար հաշվարկված վճարի, ինչպես նաև հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի գտնվելու տևողության և, ըստ դրա՝ պահպանման համար գանձման ենթակա և փաստացի գանձված գումարի չափի վերաբերյալ կտրոնները (դրանց առկայության դեպքում)։

6. Սույն կարգի 5-րդ կետում նշված ժամկետը լրանալուց հետո կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերն ենթակա են հանձնման Երևանի քաղաքապետարանի աշխատակազմին՝ արխիվացման նպատակով։

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՑ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղից հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման կարգը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՑ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղից հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման կարգը սահմանելու մասին»Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՑ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղից հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման կարգը սահմանելու մասին»Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ